ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆՎԱՐ 2006)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
«ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի
«Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է
մակրոտնտեսական, հարկաբյուջետային, դրամավարկային,
ինչպես նաև ՀՀ վճարահաշվարկային, ֆինանսական համակարգի
հիմնական ցուցանիշների և տնտեսական նորմատիվների
վերաբերյալ տեղեկատվություն:
Մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ
տեղեկատվության աղբյուրը
ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է,
իսկ հարկաբյուջետային, դրամավարկային և ֆինանսական
վիճակագրության տվյալների աղբյուրը՝
ՀՀ կենտրոնական բանկը:
Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում
ընդգրկված է ՀՀ միջազգային պահուստների, փողի
ագրեգատների, ֆինանսական շուկայի և փոխարժեքների վերա-
բերյալ տեղեկատվություն:

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ
տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է.

http:// www.CBA.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
(03.02.2006)

Առաջին եռամսյակի կանխատեսումների և դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ

2006 թվականի փետրվարի 3-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Ա. Նորեկյանը, Կ. Մինասյանը, Վ. Գաբրիելյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց 2005 թվականի ընթացքում տնտեսական իրավիճակի վերլուծության և 2006 թվականի կանխատեսումների ներկայացումը:

Ինչպես 2005 թվականի ցուցանիշները, այնպես էլ 2006 թվականի կանխատեսումները ներառում են տնտեսության իրական, արտաքին, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները, ինչպես նաև ապագայի հավանական ռիսկերը:

Ըստ Կենտրոնական բանկի կանխատեսումների՝ շուկայի սպասումների պարագայում ձևավորվող տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի պահպանման պայմաններում 2006 թվականի դեկտեմբերին, 2005 թվականի դեկտեմբերի համեմատությամբ, գնաճը կկազմի 3-4%: Կանխատեսումների ենթատեքստում գնահատվել է տնտեսության առանձին հատվածների ազդեցությունը ինչպես 2005 թվականի գնաճի, այնպես էլ 2006 թվականի գնաճի կանխատեսված ցուցանիշների վրա:

2005 թվականի զարգացումները

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2005 թվականի դեկտեմբերին, 2004 թվականի դեկտեմբերի համեմատությամբ, գրանցվել է 0.2% գնանկում՝ հիմնականում պայմանավորված սպառողական զամբյուղում պարենային ապրանքների (տեսակարար կշիռը՝ գրեթե 66%) գների նվազմամբ, մինչդեռ ոչ պարենային ապրանքների և ծառայությունների ինդեքսն ավելացել է համապատասխանաբար 2.1%-ով և 1.9%-ով:

Գնանկումը պայմանավորող հիմնական գործոնը գյուղատնտեսական մթերքների և ներմուծված ապրանքների գների նվազումն է: Իրական աշխատավարձի առաջանցիկ աճն արտադրողականության համեմատությամբ էական ազդեցություն չի ունեցել գնաճի ընդլայնման ուղղությամբ՝ պայմանավորված տնտեսության հիմնական ճյուղերում արտադրանքի ինքնարժեքում աշխատավարձի ցածր տեսակարար կշռով: Տնտեսության հարկաբյուջետային հատվածը տարվա կտրվածքով ընդհանուր առմամբ չեզոք ազդեցություն է ունեցել գնաճի վրա (տարվա երկրորդ կեսի ընդլայնողական վարքագծի ազդեցությունը կդրսևորվի 2006 թվականի առաջին կիսամյակում), իսկ դրամավարկային ցուցանիշների ծրագրային մակարդակների զգալիորեն բարձր աճը որոշ չափով մեղմել է 2005 թվականի գնանկումը (լագային ընդլայնողական ազդեցություն կարձանագրվի 2006 թվականի առաջին կիսամյակում):

2006 թվականի կանխատեսումները

Իրական հատված

Կանխատեսվել է ՀՆԱ-ի ավելի քան 10% իրական աճ, որի կառուցվածքում 2006 թվականին կպահպանվեն արդյունաբերության և ծառայության ոլորտների՝ նախորդ տարիների աճի տեմպերը, իսկ շինարարության աճի տեմպերը նախորդ տարիներին արձանագրված բավականին բարձր աճի տեմպերից հետո դանդաղ կնվազեն: Գյուղատնտեսության ոլորտի աճի տեմպն ավելի համեստ կլինի (3.5%)՝ նախորդ տարիների

բարձր աճի (2004-05 թթ.՝ միջինը 12.8%) տեմպերի համեմատ, որն ընդլայնողական ազդեցություն կթողնի գների մակարդակի վրա:

Շինարարության և արդյունաբերության ոլորտների աճը վերջին տարիներին ուղեկցվել է գործազրկության նվազմամբ և արտադրողականության աճով: Նշված երկու գործոնները նախապայման են 2006 թվականի իրական աշխատավարձի աճի: Սա նույնպես ընդլայնողական ազդեցություն կարող է թողնել գների մակարդակի ձևավորման վրա, եթե ավելի արագ տեմպերով չաճի արտադրողականությունը:

Բնական գազի սակագները

Գների վրա ընդլայնողական ազդեցություն կարող է թողնել նաև բնական գազի սակագների սպասվող աճը: Ընդ որում, ազդեցությունը լինելու է ինչպես ուղղակի՝ սպառողական զամբյուղի վրա, այնպես էլ անուղղակի՝ արտադրության ծախքերի ավելացման միջոցով: Գնաճի կանխատեսման մեջ ներառված է սակագների ուղղակի աճի ազդեցությունը սպառողական զամբյուղում դրա տեսակարար կշռի չափով, սակայն անուղղակի ազդեցությունը դեռևս հնարավոր չէ գնահատել: Անուղղակի ազդեցություն կլինի ինչպես էլեկտրաէներգիայի սակագների հետագայում ակնկալվող աճի միջոցով, այնպես էլ բնական գազ սպառող ձեռնարկությունների կողմից թողարկվող ապրանքատեսակների ինքնարժեքի ավելացման արդյունքում դրանց գների աճի միջոցով՝ որոշակի լագով:

Արտաքին հատված

Նախորդ տարվա համեմատությամբ կանխատեսվում է մասնավոր հատվածի տրանսֆերտների աճի տեմպերի դանդաղում, ինչպես նաև ընթացիկ հաշվի պակասուրդի խորացում, որի պայմաններում ՀՀ դրամն ԱՄՆ դոլարի նկատմամբ կարժևորվի ավելի դանդաղ տեմպերով, ինչն էլ կպայմանավորի սպառողական զամբյուղում ներմուծվող ապրանքատեսակների գների վրա դեֆլյացիոն ճնշումների բացակայությունը:

Փող և վարկ

2005 թվականի ընթացքում գնանկումը կրել է առավելապես ոչ մոնետար գործոնների ազդեցությունը, և քանի որ տնտեսությունում առկա էր փողի նկատմամբ գնաճային ճնշումներ չառաջացնող պահանջարկի աճ՝ պայմանավորված դրամայնացման աճով, երկրորդ կիսամյակում՝ բյուջեի ընդլայնողական վարքագծով և այլ գործոններով, Կենտրոնական բանկը բավականին բարձր տեմպերով ավելացրել է փողի առաջարկը: Սա մի կողմից պարզապես չեզոքացրել է ավելի մեծ գնանկման դրսևորումները, մյուս կողմից՝ կուտակել գնաճային մեծ ներուժ, որը դրսևորվի 2006 թվականին: Ընդ որում, 2005 թվականի երկրորդ կիսամյակի փաստացի և 2006 թվականի համար ծրագրված հարկաբյուջետային քաղաքականությունը նույնպես ընդլայնողական ազդեցություն է ունենալու 2006 թվականի գնաճի վրա:

Շուկայի սպասումների պարագայում ձևավորվող տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի պահպանման պայմաններում կանխատեսվում է դրամային և փողի ագրեգատների էական աճ՝ պայմանավորված տնտեսության վարկավորման և կանխիկի՝ նախորդ տարվա աճի տեմպերի պահպանմամբ: Փողի ագրեգատների աճը ձևավորվել է տնտեսության այլ հատվածների զարգացումների պայմաններում և ընդլայնող ազդեցություն կունենա գնաճի վրա:

Ամփոփում

2006 թվականին կշարունակվի երկնիշ տնտեսական աճը, որը, համակցվելով տարվա ընթացքում համաշխարհային շուկայում և տարածաշրջանում էներգակիրների բարձր գների հետ, կարող է առաջացնել գնաճային ճնշումներ՝ իրական նախապայմաններ ստեղծելով գնաճի 3% ցուցանիշի գերազանցման ուղղությամբ: Միաժամանակ, առաջադրվում են որոշ ռիսկեր, որոնք կարող են ավելի ընդլայնողական ազդեցություն ունենալ գնաճի ցուցանիշի վրա:

- Եվրոպական արժույթների նկատմամբ ԱՄՆ դոլարի արժեզրկումը ներմուծվող եվրոպական ապրանքների դոլարային գների թանկացման միջոցով կարող է առաջացնել գնաճային ճնշումներ: Աշխարհաքաղաքական զարգացումների արդյունքում հնարավոր է նաև նավթամթերքի գների աճ: Ներմուծվող ապրանքների, և մասնավորապես՝ վառելիքի գների սպասվածից բարձր աճի պարագայում առկա կլինեն գնաճի նպատակային ցուցանիշից գերազանցման ռիսկեր:


- 2005 թվականին փողի ագրեգատների մեծածավալ աճի լագային ազդեցությունը 2006 թվականի գնաճի ցուցանիշի վրա կարող է ունենալ կանխատեսվածից ավելի ընդլայնողական ազդեցություն:

Բնակլիմայական պայմանները սպասվածից ավելի բարենպաստ լինելու դեպքում առկա է նաև գնաճի նվազման ռիսկ: Գյուղատնտեսության ոլորտի աճը կլինի կանխատեսվածից շատ ավելի բարձր, որը, սկսած 2-րդ եռամսյակից, զսպողական ազդեցություն կունենա սպառողական զամբյուղում պարենային ապրանքների գների վրա:

Միաժամանակ, բնականոն գնաճի սպասումները շարունակում են մնալ ցածր, և ԿԲ խորհուրդը համաձայնվեց, որ գնաճային ճնշումների տարեկան 3% ցուցանիշի գերազանցման ռիսկերը կարող են չեզոքացվել աստիճանաբար:

Այս պարագայում Կենտրոնական բանկի խորհուրդը որոշեց բարձրացնել ԿԲ ռեպո համաձայնագրերի (վերաֆինանսավորման) տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ հասցնելով 4%-ի, ավանդների և լոմբարդային վարկերի տոկոսադրույքները թողնել անփոփոխ՝ համապատասխանաբար 1% և 16%: Միաժամանակ տնտեսության զարգացման հեռանկարների փոփոխության դեպքում խորհուրդը կանդրադառնա տոկոսադրույքներին՝ գնաճի տարեկան 3% ցուցանիշի ապահովման համար:

ՍԳԻ-ի տարեկան տոկոսային փոփոխությունը



Տարբեր միջակայքերում գնաճի ցուցանիշի գտնվելու հավանականությունները (2006 թ. դեկտեմբերը 2005 թ. դեկտեմբերի նկատմամբ)

Միջակայք	մինչև 1%	1%-2%	2%-3%	3%-4%	4%-5%	5%-ից ավելի
Հավանականություն	< 1	4	23	42	25	5

I. Իրական հատված

Ամվամում	*2005թ. հունվար – դեկտեմբեր*	*2005թ. հունվար – դեկտեմբերի իրական աճի ինդեքսը 2004թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ (%)*	*2006թ. հունվար*	*2006թ. հունվարի իրական աճի ինդեքսը 2005թ. հունվարի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն ՀՀ դրամ)*	2228027.5	113.9	72391.4	107.7
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	-	103.1	-	96.9
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար ՀՀ դրամ. աճողական)* [1]	2015.8	114.7	67.4	109.0
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	651393.0	107.5	42493.1	98.7
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	6316.5	104.8	586.6	86.5
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն ՀՀ դրամ)*	493017.9	111.2	14031.2	104.1
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	886198.7	109.3	42401.7	106.6
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	426399.4	134.2	3493.4	104.6
Բնակչության դրամական եկամուտները *(մլն ՀՀ դրամ)*	1454879.6	114.2[1]	74536.1	118.4[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն ՀՀ դրամ)*	1405138.6	111.1[1]	87553.6	113.8[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	52059	118.7[1]	57448[2]	131.5[1,2]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1203.3	-	1163.0	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	98.0	-	88.7	-
Գործազրկության մակարդակը *(%)*	8.1	-	7.6	-

II. Արտաքին հատված

Ամվամում	*2005թ. հունվար-դեկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2005թ. հունվար-դեկտեմբերը 2004թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ (%)*	*2006թ. հունվար (մլն ԱՄՆ դոլար)*	*2006թ. հունվարը 2005թ. հունվարի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	950.4	131.5	47.8	110.5
Ներմուծում *(ՍԻՖ)*	1767.9	130.9	117.4	101.7
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	817.5	130.2	69.6	96.5

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.6	97.8	100.3	99.1
2006 թ. հունվարը 2005 թ. հունվարի համեմատությամբ	98.1	93.4	114.4	103.2

** Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների:*

IV. Գնաճ

ժամանակաշրջան	*2004*	*2005*	*2006*	*2006*
	նախորդ ամսվա նկատմամբ (%)			*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	2.5	5.4	3.6	3.6
Փետրվար	-0.6	-0.7		
Մարտ	0.3	-0.9		
Ապրիլ	1.2	-0.9		
Մայիս	1.1	0.1		
Հունիս	-0.1	-1.4		
Հուլիս	-2.5	-4.5		
Օգոստոս	-2.4	-1.4		
Սեպտեմբեր	-0.7	0.9		
Հոկտեմբեր	0.1	0.1		
Նոյեմբեր	0.8	1.1		
Դեկտեմբեր	2.3	2.3		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.0	-0.2		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	7.0	0.6		

V. Գնաճին առավելապես նպաստող ապրանքատեսակները [1]

Անվանում	*Նախորդ ամսվա նկատմամբ (%)*	*Նպաստում (տոկոսային կետ)*
ՍԳԻ	**103.6**	
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**105.2**	**3.5**
բանջարեղեն և կարտոֆիլ	135.3	3.73
միրգ	124.1	1.25
մսամթերք	101.3	0.20
ձու	104.6	0.17
ձկնամթերք	110.3	0.16
կաթնամթերք	101.0	0.07
Ոչ պարենային ապրանքներ	**100.0**	**0.0**
Ծառայություններ	**100.1**	**0.0**

VI. Ընդհանուր գնաճ [1]

Ցուցանիշ	**2004**	**2005**	**2006**
	նախորդ ամսվա նկատմամբ (%)		
Հունվար	0.65	0.71	0.39
Փետրվար	0.05	-0.37	
Մարտ	0.03	-0.26	
Ապրիլ	0.05	-0.26	
Մայիս	0.04	-0.08	
Հունիս	-0.13	-0.10	
Հուլիս	-0.50	-0.42	
Օգոստոս	-0.31	-0.28	
Սեպտեմբեր	-0.30	0.29	
Հոկտեմբեր	-0.16	0.03	
Նոյեմբեր	-0.05	0.17	
Դեկտեմբեր	0.30	0.29	
	նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)		
Հունվար	4.45	0.72	0.08
Փետրվար	5.60	1.07	
Մարտ	6.37	0.71	
Ապրիլ	6.39	0.13	
Մայիս	6.23	-0.74	
Հունիս	5.41	-0.57	
Հուլիս	6.71	-0.78	
Օգոստոս	6.90	-0.52	
Սեպտեմբեր	6.02	0.26	
Հոկտեմբեր	5.67	0.32	
Նոյեմբեր	4.39	0.47	
Դեկտեմբեր	0.55	0.52	

VII. Բնակտնտ գնաճին առավելապես նպաստող 10 ապրանքատեսակները [1]

Անվանում	***Նպաստումը բնակտնտ գնաճին (տոկոսային կետ)***
Նախորդ ամսվա նկատմամբ	
Բնակտնտ գնաճ. *այդ թվում՝*	**0.39**
վճարովի բուհ	0.13
տեսամագնիտոֆոն	0.03
քանոն	0.02
գրելու թուղթ	0.02
բենզին	0.01
ֆաքսային հաղորդագրություն	0.01
հեռախոսի ապարատ	0.01
վճարովի դպրոց	0.01
մանկապարտեզ	0.01
գրքեր	0.01


[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների:
[2] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ			Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական կարճաժամկետ պարտատոմսեր	պետական միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսեր	ընդամենը	կենտրոն. կառավ. հաշիվներ և ավանդներ դրամով	կենտր. կառավ. հաշիվներ արտարժ.	ՇԻԳ-երի միջոցներ դրամով	ՇԻԳ-երի միջոցներ արտարժույթով	ընդամենը	
2005									
Դեկտեմբեր	0	5677	5677	21966	865	27	112	22970	**-17294**
2006									
Հունվար	0	5650	5650	35261	879	22	113	36275	**-30625**


[1] *Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:*



ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ[1]

(մլն ՀՀ դրամ)

Ժամկետ	Առևտրային բանկերի պարտավորությունները Կառավարության նկատմամբ [2]	ԿԲ պարտավորությունները Կառավարության նկատմամբ [3]	Ընդամենը
2005			
Դեկտեմբեր	16438	22970	39409
2006			
Հունվար	17784	36275	54059



[1] *Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:*

[2] *Ընդգրկված են առևտրային բանկերի պարտավորությունները հանրապետական և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների, ինչպես նաև ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի նկատմամբ:*

[3] *Ընդգրկված են հանրապետական բյուջեի և ՇԻԳ-երի միջոցները:*

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 05	Հ - 06
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2,3]	***214646***	***214812***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-14068***	***-27422***
Կառավարություն	-17294	-30625
Բանկեր	4227	7584
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0
Ավանդներ (-)	-7701	-3601
Հակադարձ ռեպո (-)	0	-591
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-21483	-23534
Զուտ այլ ակտիվներ	20481	19153
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [4]	***195487***	***187768***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***200578***	***187391***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	155275	142257
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	22258	22418
Պարտադիր պահուստ. (արտարժույթով)	22278	21652
Այլ հաշիվներ	768	1064
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	655	1052
Այլ հաշիվներ (արտարժույթով)	113	13
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***166***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-13353***
Կառավարություն	-	-13331
Բանկեր	-	3357
այդ թվում՝ ավանդներ (-)	-	-4100
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր		2052
Զուտ այլ ակտիվներ	-	-1327
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված)	***-***	***-7720***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-13187***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13018
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	160
Պարտադիր պահուստ. (արտարժույթով)		-626
Այլ հաշիվներ	-	297
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	397
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	-100
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***0.1***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-94.9***
Կառավարություն	-	-77.1
Բանկեր	-	79.4
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր		9.6
Զուտ այլ ակտիվներ	-	-6.5
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված)	***-***	***-3.9***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-6.6***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	8.4
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	0.7
Պարտադիր պահուստ. (արտարժույթով)		-2.8
Այլ հաշիվներ	-	38.7

[1] Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:

[2] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՄ-ն ընդգրկում է փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվները և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունները:

[3] ԶԱՄ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 450.19 դրամ, 1 ՀՓԻ = 1.4293 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.1825 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.7181 ԱՄՆ դոլար:

[4] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջինը:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	**Դ - 05**	**Հ - 06**
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**18584**	**23303**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	89535	99275
Արտաքին պարտ. փոխարկելի արտարժույթով	-64663	-69449
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-6289	-6524
ԶՆԱ	**201896**	**199523**
Կառավարություն	22262	19237
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	71555	71059
Պահանջներ ԿԲ նկատմամբ	83454	82833
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-11899	-11775
Տնտեսություն	188500	188328
Ձեռնարկություններ	98715	97609
Դրամով	41041	41228
Արտարժույթով	57616	56330
Արժեթղթեր	59	52
Տնային տնտեսություններ	83098	82797
Դրամով	29408	28 877
Արտարժույթով	53690	53921
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	141	136
Դրամով	86	81
Արտարժույթով	55	54
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6546	7786
Դրամով	4945	6089
Արտարժույթով	1602	1697
Զուտ այլ ակտիվներ	-80420	-79100
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	3481	3506
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	2136	4019
Արտաքին պարտ. (ոչ փոխարկելի արտարժ.)	-386	-2227
Ներդրումներ փայաբաժիններում	479	497
Միջբանկային պահանջներ	5139	4968
Այլ ակտիվներ	38693	39823
Միջբանկային պարտավորություններ	-4568	-4519
Թողարկված պարտատոմսեր	-519	-522
Կապիտալ հաշիվներ	-95087	-95835
Այլ պարտավորություններ	-29786	-28811
ԱՎԱՆԴՆԵՐ	**220480**	**222826**
Դրամով ավանդներ	79836	75380
Ցպահանջ ավանդներ	57095	52884
Ժամկետային ավանդներ	22741	22496
Ավանդներ արտարժույթով	140644	147446
Ցպահանջ ավանդներ	58244	63990
Ժամկետային ավանդներ	82401	83456

ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 05	Հ - 06
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***233230***	***238115***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***132329***	***116533***
Կառավարություն	4968	-11388
Տնտեսություն	188522	188349
Ձեռնարկ. և կազմակերպ.	98715	97609
որից՝ կուտակված տոկոսներ	851	908
Տնային տնտեսություններ	83119	82819
որից՝ կուտակված տոկոսներ	1260	1388
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	141	136
որից՝ կուտակված տոկոսներ	1	1
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6546	7786
որից՝ կուտակված տոկոսներ	20	17
Զուտ այլ ակտիվներ	-61161	-60429
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ [3]	***224802***	***207189***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ [4]	***365559***	***354648***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	144311	130758
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [5]	57750	53935
որից՝ կուտակված տոկոսներ	20	27
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	22741	22496
որից՝ կուտակված տոկոսներ	297	303
Արտարժույթով ավանդներ	140757	147459
Ցպահանջ [5]	58356	64002
որից՝ կուտակված տոկոսներ	7	13
Ժամկետային	82401	83456
որից՝ կուտակված տոկոսներ	621	638
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***4885***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-15796***
Կառավարություն	-	-16356
Տնտեսություն	-	-172
Ձեռնարկ. և կազմակերպ.	-	-1106
որից՝ կուտակված տոկոսներ	-	56
Տնային տնտեսություններ	-	-301
որից՝ կուտակված տոկոսներ	-	128
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-5
որից՝ կուտակված տոկոսներ	-	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	1240
որից՝ կուտակված տոկոսներ	-	-3
Զուտ այլ ակտիվներ	-	732
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ	***-***	***-17613***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ	***-***	***-10911***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-13553
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-3815
որից՝ կուտակված տոկոսներ	-	7
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	-245
որից՝ կուտակված տոկոսներ	-	6
Արտարժույթով ավանդներ	-	6702
Ցպահանջ	-	5646
որից՝ կուտակված տոկոսներ	-	6
Ժամկետային	-	1056
որից՝ կուտակված տոկոսներ	-	17

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***2.1***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-11.9***
Կառավարություն	-	-329.2
Տնտեսություն	-	-0.1
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-1.1
Տնային տնտեսություններ	-	-0.4
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-3.7
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	18.9
Զուտ այլ ակտիվներ	-	1.2
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ	-	***-7.8***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ	-	***-3.0***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-9.4
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-6.6
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	-1.1
Արտարժույթով ավանդներ	-	4.8
Ցպահանջ	-	9.7
Ժամկետային	-	1.3


[1] Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:
[2] ՁԱՍ-ն ընդգրկում է միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունները: Կենտրոնական բանկի ՁԱՍ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով (1 ԱՄՆ դոլար = 450.19 դրամ, 1 ՀՓԻ = 1.4293 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.1825 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.7181 ԱՄՆ դոլար), առևտրային բանկերի ՁԱՍ-ն՝ փաստացի փոխարժեքներով:
[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):
[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):
[5] Ընդգրկում են հաշիվները և ցպահանջ ավանդները:


ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]


(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	M1 [2]	ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	M2 [3]	Արտարժույթով ավանդներ	M2X [4]
2005							
Դեկտեմբեր	144311	57750	202061	22741	224802	140757	365559
2006							
Հունվար	130758	53935	184693	22496	207189	147459	354648

[1] Ավանդների մեջ կուտակված տոկոսները ընդգրկված են:
[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները):
[3] M2-ը դրամային զանգվածն է. ընդգրկում է M1-ը և ՀՀ դրամով ժամկետային ավանդները:
[4] M2X-ը փողի զանգվածն է. ընդգրկում է M2-ը և արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները):


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
210000
190000
170000
150000
130000
110000
90000
70000
50000
30000
03
04
05
06
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Պարտադիր պահուստներ դրամով
Պարտադիր պահուստներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
400000
350000
300000
250000
200000
150000
100000
50000
0
03
04
05
06
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
65
60
55
50
45
40
35
30
25
00
01
02
03
04
05
06


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
95
90
85
80
75
70
65
60
00
01
02
03
04
05
06

ՄԵՋՈՒՄՅՈՒՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
1997					
Հունվար	38139	31733	36280	39123	51937
Փետրվար	39510	31934	36978	40207	53450
Մարտ	40563	31957	37104	40418	55825
Ապրիլ	40289	31995	37993	41486	58259
Մայիս	43199	33318	39563	43159	61701
Հունիս	42712	33888	40595	44174	60780
Հուլիս	44758	34420	41433	44441	62742
Օգոստոս	46736	35169	44867	47979	67383
Սեպտեմբեր	48252	34560	43240	46469	66926
Հոկտեմբեր	48320	35203	44254	47646	68471
Նոյեմբեր	48047	34980	43919	47502	70066
Դեկտեմբեր	46105	33551	40756	43937	68043
1998					
Հունվար	44404	33704	41816	43283	68583
Փետրվար	45440	33027	41691	44762	69299
Մարտ	46770	35586	45331	48656	71843
Ապրիլ	47696	34737	44220	47614	73607
Մայիս	48844	33701	44295	47871	75363
Հունիս	48916	33603	45216	48621	79407
Հուլիս	49962	34437	46731	51307	83987
Օգոստոս	49811	34989	48604	53514	86688
Սեպտեմբեր	49833	36376	48309	53151	89288
Հոկտեմբեր	50449	36150	47611	52610	90060
Նոյեմբեր	47871	34394	45594	50305	88598
Դեկտեմբեր	49105	36919	48733	54258	93023
1999					
Հունվար	46575	34886	46949	51686	92880
Փետրվար	47784	32650	43558	47951	93925
Մարտ	47469	32436	42569	46801	95912
Ապրիլ	47119	35557	46564	50856	92160
Մայիս	48011	35607	48881	53060	96663
Հունիս	45537	34953	46234	51310	95226
Հուլիս	47399	35970	47183	52824	96580
Օգոստոս	46926	33771	45935	51557	97320
Սեպտեմբեր	51207	39132	52714	57826	104592
Հոկտեմբեր	50238	36033	48211	53227	103985
Նոյեմբեր	49990	37770	50456	55659	106867
Դեկտեմբեր	49117	38025	48316	53114	106019
2000					
Հունվար	47760	34321	45046	49213	99551
Փետրվար	49497	35691	45579	50263	105839
Մարտ	52289	37605	48803	54008	111756
Ապրիլ	52430	37231	47708	53234	113281
Մայիս	53602	38403	48733	53801	114807
Հունիս	56705	40903	52406	57585	123654
Հուլիս	54562	42171	54012	59556	125638
Օգոստոս	56730	43137	54247	59576	124658
Սեպտեմբեր	57312	44059	55996	60629	128294
Հոկտեմբեր	57072	44897	57358	63059	131463
Նոյեմբեր	65994	51125	65372	71177	144951
Դեկտեմբեր	66024	53086	66049	72362	146894

2001					
Հունվար	64130	47413	59571	65106	139301
Փետրվար	62117	48599	60911	66587	141392
Մարտ	63609	48141	61017	66455	145708
Ապրիլ	66979	50395	63792	69579	150881
Մայիս	65489	52487	64482	70055	152724
Հունիս	69525	54396	67338	73813	159546
Հուլիս	68525	53289	66727	72987	157466
Օգոստոս	68492	55705	67588	74357	159138
Սեպտեմբեր	70646	54184	68164	75138	158318
Հոկտեմբեր	72514	58312	72053	79064	164926
Նոյեմբեր	74796	59305	73258	80485	166923
Դեկտեմբեր	73302	58039	71509	78730	153188
2002					
Հունվար	71165	55009	66127	73156	143951
Փետրվար	74895	59301	71886	79228	149266
Մարտ	74925	60414	73868	80641	150783
Ապրիլ	78419	60940	74734	81582	154868
Մայիս	74854	61906	75421	82411	156318
Հունիս	77557	62124	77621	84782	160255
Հուլիս	75626	61770	76772	84597	160314
Օգոստոս	76946	62652	76764	84428	161776
Սեպտեմբեր	79397	66295	82831	94190	175977
Հոկտեմբեր	87456	71502	89251	100959	182553
Նոյեմբեր	89711	72045	90729	102767	185287
Դեկտեմբեր	101488	79028	106012	116808	196763
2003					
Հունվար	99148	73865	94105	104148	179310
Փետրվար	100520	77514	99901	108959	186712
Մարտ	96642	76773	98556	108492	184255
Ապրիլ	100792	76697	100773	111063	196202
Մայիս	103283	79817	104705	117337	200573
Հունիս	99418	79626	103848	117465	200156
Հուլիս	100927	82429	106313	119616	203348
Օգոստոս	101884	83927	106868	121036	204750
Սեպտեմբեր	102089	81003	107436	121667	209759
Հոկտեմբեր	101857	80994	108696	121673	210143
Նոյեմբեր	102252	80934	107655	120612	210747
Դեկտեմբեր	108158	82099	114042	125571	226481
2004					
Հունվար	102148	77952	103086	116236	213938
Փետրվար	102781	81786	108681	120328	223456
Մարտ	107098	81632	109855	121970	227742
Ապրիլ	107793	82174	111470	123396	233260
Մայիս	106775	81753	110771	123913	233823
Հունիս	110746	85638	115138	127051	239048
Հուլիս	111910	85185	114368	124915	243525
Օգոստոս	109618	85771	113119	123141	243012
Սեպտեմբեր	112674	86152	115586	125418	250622
Հոկտեմբեր	114295	86912	119542	129711	257491
Նոյեմբեր	117205	86591	123734	134300	264403
Դեկտեմբեր	120438	87963	122499	137156	276970


2005					
Հունվար	116338	80910	111555	126276	261245
Փետրվար	120128	87261	123664	136626	270252
Մարտ	128003	93825	132922	148108	280184
Ապրիլ	135020	102285	142094	158665	292257
Մայիս	141658	105907	146426	162870	297564
Հունիս	157198	109628	152439	169398	311568
Հուլիս	167946	115501	163616	182501	327265
Օգոստոս	178291	122313	167283	186925	340380
Սեպտեմբեր	171593	122667	168475	188774	328846
Հոկտեմբեր	177986	126988	177388	198612	337894
Նոյեմբեր	180990	130504	180673	203450	336462
Դեկտեմբեր	182935	128784	186927	211589	354082
2006					
Հունվար	185626	128814	179302	200488	343366

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Հարթեցման մեթոդիկան նկարագրված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբերի» 2001 թ. 2-րդ եռամսյակի համարում հրապարակված «ՀՀ փողի ագրեգատների թվային շարքերի հարթեցումներ» նյութում:
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են, քանի որ նոր տվյալներ ի հայտ գալուն զուգահեռ համապատասխան ամիսների սեզոնայնության գործակիցները փոխվում են: Այդ պատճառով «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում հրապարակվում են փողի ագրեգատների սեզոնայնորեն հարթեցված նոր շարքերը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	**Դ - 05**	**Հ – 06**
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթ)	**-1787**	**-1821**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	156	150
Արտաքին պարտավորություններ փոխ. արտարժ.	-1943	-1900
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	0	-71
ԶՆԱ	**2643**	**2744**
Կառավարություն	-14	-11
Ջուտ պահանջներ առևտրային բանկերին	1061	1266
Պահանջներ առևտրային բանկերին	1296	1506
Պարտավորություններ առևտրային բանկերի նկատմամբ	-235	-241
Տնտեսություն	6315	6196
Ձեռնարկություններ	3185	3139
Դրամով	1052	1025
Արտարժույթով	2133	2114
Արժեթղթեր	-	-
Տնային տնտեսություններ	3119	3047
Դրամով	948	873
Արտարժույթով	2171	2174
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	10	10
Դրամով	0	0
Արտարժույթով	10	10
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-
Դրամով	-	-
Արտարժույթով	-	-
Ջուտ այլ ակտիվներ	-4719	-4706
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	-	-
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-
Արտաքին պարտավոր. (ոչ փոխարկելի արտարժույթ)	-	-
ՀՀ դրամ դրամարկղում	17	34
Ներդրումներ փայաբաժիններում	-	-
Պահանջներ վարկային կազմակերպություններին	-	-
Այլ ակտիվներ	390	430
Պարտավորություն. վարկային կազմակերպություններին	-	-
Թողարկված պարտատոմսեր	-	-
Կապիտալ հաշիվներ	-4421	-4444
Այլ պարտավորություններ	-705	-726
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**856**	**924**
Դրամով փոխառություններ	28	91
Ցպահանջ փոխառություններ	-	-
Ժամկետային փոխառություններ	28	91
Արտարժույթով փոխառություններ	828	833
Ցպահանջ փոխառություններ	-	-
Ժամկետային փոխառություններ	828	833

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 05	Հ - 06
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ[2]	**231443**	**236294**
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	214646	214812
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	18584	23303
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-1787	-1821
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**133751**	**117827**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	***4954***	***-11399***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-17294	-30625
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր)	22262	19237
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	-14	-11
Պահանջներ տնտեսությանը	***194602***	***194305***
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	22	21
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	188265	188088
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	6315	6196
Այլ ակտիվներ (զուտ)	***-65805***	***-65079***
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**365194**	**354121**
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	144294	130724
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [3]	57631	53697
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	22605	22330
Արտարժույթով ավանդներ [3]	139808	146447
Վարկային կազմակերպ. ներգրաված փոխառություններ	856	924
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	**4851**
Զուտ արտաքին ակտիվներ (Կենտրոնական բանկ)	-	166
Զուտ արտաքին ակտիվներ (առևտրային բանկեր)	-	4719
Զուտ արտաքին ակտիվներ (վարկային կազմ.)	-	-34
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	**-15924**
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը	**-**	***-16353***
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (Կենտրոնական բանկ)	-	-13331
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (առևտրային բանկեր)	-	-3025
Զուտ պահանջներ ՀՀ կառավարությանը (վարկային կազմ.)	-	3
Պահանջներ տնտեսությանը	**-**	***-297***
Պահանջներ տնտեսությանը (Կենտրոնական բանկ)	-	-1
Պահանջներ տնտեսությանը (առևտրային բանկեր)	-	-178
Պահանջներ տնտեսությանը (վարկային կազմ.)	-	-119
Այլ ակտիվներ (զուտ)	**-**	***726***
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԻՐԱՑՎԵԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**-**	**-11073**
Ֆինանսական համակարգից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13571
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [3]	-	-3935
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	-275
Արտարժույթով ավանդներ [3]	-	6640
Վարկային կազմակերպ. ներգրաված փոխառություններ	-	67

[1] *Ցուցանիշները հաշվարկված են կուտակման սկզբունքով:*

[2] *ԶԱՄ-ն ընդգրկում է փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվները և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունները: Կենտրոնական բանկի ԶԱՄ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով, իսկ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ԶԱՄ-ն՝ փաստացի փոխարժեքներով:*

[3] *Ներառում են նաև հաշիվները:*


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	2005	2006
	Դ	Հ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշնշ. միջոցների)*	674.0	680.4
Համախառն միջազգային պահուստներ	759.5	766.1
Ոսկի	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	10.2	10.4
Արտարժույթ [2]	749.3	755.7

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով և կուտակման սկզբունքով:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցուցանիշներ	2005 [4]	2006
	Դ	Հ
Վարկեր [1]		
Իրավաբանական անձանց		
ՀՀ դրամով	16.3	15.9
ԱՄՆ դոլարով	13.5	12.8
Ֆիզիկական անձանց		
ՀՀ դրամով	22.0	21.5
ԱՄՆ դոլարով	20.3	22.7
Ավանդներ [1]		
Իրավաբանական անձանցից		
ՀՀ դրամով	6.5	6.1
ԱՄՆ դոլարով	5.2	3.8
Ֆիզիկական անձանցից		
ՀՀ դրամով	6.4	6.8
ԱՄՆ դոլարով	4.4	4.7
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	3.5	3.5
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	1.0	1.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	16.0	16.0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված պարտատոմսերի եկամտաբերությունը [2,3]	4.3	4.3
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը [3]	-	-
Պետական միջինժամկետ մասնակի մարումներով պարտատոմսերի եկամտաբերությունը [3]	-	4.9
Գնաճ	-0.2	3.6

[1] Հաշվարկված են որպես մինչև 1 տարի ժամկետով (բացառությամբ ցպահանջի) ներգրավված/տեղաբաշխված միջոցների միջին կշռված տոկոսադրույք:


[2] Ներառված են բոլոր ժամկետայնության արժեթղթերը:

[3] Ներկայացված են առաջնային շուկայում տեղաբաշխված արժեթղթերի միջին կշռված եկամտաբերությունները:


[4] Ներկայացված են տարվա վերջին ամսվա տոկոսադրույքները: Գնաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 05	Հ - 06
1	446.77	-
2	447.84	-
3	-	-
4	-	453.27
5	449.11	452.26
6	451.91	-
7	454.58	-
8	458.15	454.82
9	456.11	454.77
10	-	454.49
11	-	453.46
12	452.86	453.43
13	451.37	453.72
14	449.79	-
15	446.39	-
16	444.21	455.92
17	-	455.22
18	-	454.91
19	445.29	453.32
20	447.09	451.51
21	448.98	-
22	448.98	-
23	446.25	447.58
24	-	446.91
25	-	446.80
26	446.25	446.86
27	447.49	447.31
28	447.83	-
29	448.51	-
30	450.19	449.10
31	-	449.19
ժամանակահատվածի վերջ	450.19	449.19
ժամանակահատվածի միջին	449.36	451.74




Ամսաթիվ	Դ - 05	Հ - 06
1	525.80	-
2	525.99	-
3	-	-
4	-	534.72
5	525.32	546.47
6	531.76	-
7	535.63	-
8	536.49	549.56
9	536.57	549.95
10	-	548.93
11	-	547.05
12	533.70	548.11
13	538.26	549.59
14	536.37	-
15	536.56	-
16	533.01	548.88
17	-	551.36
18	-	549.30
19	533.59	549.65
20	535.48	545.11
21	536.76	-
22	533.03	-
23	527.56	540.14
24	-	548.67
25	-	548.31
26	529.21	549.37
27	530.68	548.13
28	531.08	-
29	534.44	-
30	532.35	546.64
31	-	542.71
Ժամանակահատվածի վերջ	532.35	542.71
Ժամանակահատվածի միջին	532.71	547.13



ՀՀ ԴՐԱՄ / ՌԴ ՌՈՒԲԼԻ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 05	Հ - 06
1	15.52	-
2	15.54	-
3	-	-
4	-	15.75
5	15.51	15.46
6	15.58	-
7	15.72	-
8	15.84	15.80
9	15.74	15.80
10	-	15.79
11	-	15.92
12	15.66	15.92
13	15.64	15.98
14	15.66	-
15	15.57	-
16	15.48	16.01
17	-	16.09
18	-	16.09
19	15.54	16.02
20	15.61	15.96
21	15.66	-
22	15.61	-
23	15.47	15.82
24	-	15.93
25	-	15.96
26	15.51	15.97
27	15.53	15.99
28	15.54	-
29	15.60	-
30	15.64	16.03
31	-	15.97
Ժամանակահատվածի վերջ	15.64	15.97
Ժամանակահատվածի միջին	15.60	15.91



ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ [1]

ժամկետ		1 – 3 ամիս (ներառյալ 91-օրյա)			
		Տեղաբաշխման ծավալը (մլն ՀՀ դրամ)	Միջին անվանական եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը
2005	Ապրիլ	1000.0	3.8	3.8	3.8
2006	Հունվար	-	-	-	-

ժամկետ		3 – 6 ամիս (ներառյալ 182-օրյա)			
		Տեղաբաշխման ծավալը (մլն ՀՀ դրամ)	Միջին անվանական եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը
2005	Հունվար	1500.0	4.3	4.3	4.3
	Փետրվար	1000.0	4.2	4.2	4.2
	Ապրիլ	1000.0	4.2	4.2	4.2
	Մայիս	1477.5	4.9	4.9	4.9
	Հունիս	1000.0	4.7	4.7	4.7
	Հուլիս	2000.0	4.1	4.0	4.2
	Հոկտեմբեր	500.0	3.7	3.7	3.7
2006	Հունվար	-	-	-	-

ժամկետ		6 - 9 ամիս (ներառյալ 273-օրյա)			
		Տեղաբաշխման ծավալը (մլն ՀՀ դրամ)	Միջին անվանական եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը
2005	Մարտ	2500.0	3.7	3.7	3.8
	Ապրիլ	1000.0	4.5	4.5	4.5
	Մայիս	1000.0	5.0	5.0	5.0
	Հունիս	1000.0	4.9	4.9	4.9
	Օգոստոս	500.0	3.4	3.4	3.4
	Նոյեմբեր	500.0	3.7	3.7	3.7
2006	Հունվար	-	-	-	-

ժամկետ		9 – 12 ամիս (ներառյալ 364-օրյա)			
		Տեղաբաշխման ծավալը (մլն ՀՀ դրամ)	Միջին անվանական եկամտաբ. (%)	Նվազագույն տոկոսադրույքը	Առավելագույն տոկոսադրույքը
2005	Փետրվար	1000.0	4.3	4.3	4.3
	Մարտ	500.0	3.9	3.9	3.9
	Ապրիլ	500.0	3.7	3.7	3.7
	Մայիս	500.0	4.9	4.9	4.9
	Օգոստոս	500.0	3.2	3.2	3.2
	Սեպտեմբեր	1500.0	3.81	3.75	3.91
	Հոկտեմբեր	1000.0	3.9	3.9	3.9
	Նոյեմբեր	500.0	3.8	3.8	3.8
2006	Հունվար	-	-	-	-

ՊԵՏԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԺԱՄԿԵՏԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՄԱՐՈՒՄՆԵՐՈՎ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ [1]

